

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2014թ. սեպտեմբերի 2-5-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը մասնակցել են ք. Վլադիվոստոկում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Մակրոտնտեսական վիճակագրության համար միջազգային ստանդարտների համակարգված ներդրում» խորագրով բարձր մակարդակի հանդիպմանը,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 8-12-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով համաժողովին և աշխատանքային նիստին,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 9-11-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ալմաթիում (Ղազախստանի Հանրապետություն) կայացած Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների Հազարամյակի զարգացման նպատակների խորհրդատվական հանդիպմանը,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 15-19-ը ՀՀ ԱՎԾ, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը մասնակցել են ք. Նյուշատեղում (Շվեյցարիա) կայացած «Ընտրանքային հետազոտության առաջադեմ մեթոդները» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 16-17-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած ԵՄ Բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ղեկավար կոմիտեի 5-րդ նիստին,
- ✓ 2014թ. սեպտեմբերի 16-18-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Որակը վիճակագրությունում. ինչպես կառավարել փոփոխությունները» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար բարձր մակարդակի սեմինարին,

- ✓ 2014թ. սեպտեմբերի 22-26-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Մարդահամարների և կացարանների համատարած հաշվառման փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 1-3-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Ուլան Բատորում (Մոնղոլիա) կայացած «Գլոբալ գնահատումներն ազգային վիճակագրական համակարգերի զարգացման համար» խորագրով սեմինարին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 14-17-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը մասնակցել են ք. Վարշավայում (Լեհաստան) կայացած «Վարչական ռեգիստրների օգտագործումը վիճակագրական տվյալների ստացման համար» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 14-17-ը ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Դ. Դաշյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Դ. Անանյանը և շինարարության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Բ. Ջուլիակյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Կառուցվածքային բիզնես վիճակագրություն» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 15-17-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Մարդկային ռեսուրսների կառավարում և վերապատրաստում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. հոկտեմբերի 21-22-ը ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսների վիճակագրության ցուցանիշների հավաքագրման, մշակման և տարածման մեթատվյալների համակարգի մշակում» խորագրով սեմինար-խորհրդակցությանը,